

ԱՆՀԱՅՑ ՊԱՏԱՌԻԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՅԱՆՔԻՑ

Երջանկահիշատակ Գևորգ Զ Չորեքյան Ամենայն Հայոց Կաթողիկոսն իրավամբ 20-րդ դարի այն մեծագույն հայ անհատներից է, որոնց կյանքն ու գործունեությունը դեռևս կարոտ են խոր ուսումնասիրության:

1869 թվականին Նոր Նախիջևան քաղաքում ծնված ապագա կաթողիկոսը 20 տարեկանից սարկավազ ձեռնադրվելով և ապա մինչև իր մահը՝ 1954 թվականը՝ 65 տարի, անձամարտյոթ և լիակատար մկրտումով ծառայեց իր ժողովրդին ու Մայր Եկեղեցուն:

Այդ ծառայությունը դրսևորվեց ոչ միայն այնպիսի մեծագործություններում, ինչպես, օրինակ, իր տեղապահական և հետո մաս կաթողիկոսության շրջանին՝ ստալինյան բռնապետության ընթացքում, Հայ Եկեղեցու, առանձին թեմերի ու եկեղեցիների շահերի համար անդուլ և խելամիտ պայքարն էր, Հայրենական Մեծ պատերազմի ընթացքին ցուցաբերած մեծագույն ջանքերը հաղթանակն արագացնելու, ետպատերազմյան շրջանում անմախաղեպ մերձադրի կազմակերպումն ու Հայրենիքն անխուսափելի բաժանումից փրկելը, ոչ միայն քաղաքական, տնտեսական, ֆինանսական ու ոգեղեն առումներով Հայ Առաքելական Եկեղեցու հեղինակության և դիրքերի ամրապնդումն էր, այլև առօրյա ամենահասարակ հարցերում հոգևորականներին կամ պարզապես անհատ մարդկանց մկատմամբ անմնացորդ մկրտումով օգնության ձեռք մեկնելու Չորեքյանի սկզբունքներն ու արարքներն էին:

1999 թվականին լույս տեսած «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության» Զ հատորում ամփոփված Գևորգ Զ Չորեքյանի մասին պատմող բազմաթիվ նյութեր վառ ու փայլուն վկայագրերն են վերևում մեր կողմից նշած երևույթների:

Գիրքը կազմող պ. Սանդրո Բեհբուդյանի անգնահատելի աշխատանքը հայ ընթերցողին հնարավորություն է ընձեռում բազմիցս համոզվելու մեծագործ Հայրապետի կատարած աներևակալելի աշխատանքների և մարդկային մեծ ոգու մասին:

Չորեքյանի բազմաթիվ մամակները, ուղղված Ի. Ստալինին, Լ. Բերիային, Հալաստանի կառավարությանը, այդ տարիների համար ապշեցնող համարձակությանմբ առաջ են քաշում Հայ Եկեղեցուն և մեր Հայրենիքին վերաբերող հանգուցային հարցեր: Հիշատակելի են, օրինակ, Հայ Եկեղեցու տարբեր թեմերի վերականգնման, եկեղեցիների վերաբացման, պատերազմական և ետպատերազմական շրջանում կատարված օգնությունների, կաթողիկոսական ընտրությունների հիմնախնդիրների, Սևանա լճի հիմնահարցի, հայերենի ուղղագրության մասին գրությունները (տե՛ս վերը նշվ. հատորը, № № 19, 28, 43, 45, 100-101, 141, 143, 148, 149, 153, 164, 165, 175, 176, 186, 197, 199, 200, 225, 228, 234 և այլն): Սակայն քիչ չեն մաս պարզապես այն փաստաթղթերը, որոնցում խոսվում է առօրյա խնդիրների, առանձին հոգևորականների և անհատ մարդկանց հոգսերի մասին (տե՛ս նշվ. աշխ., № № 139, 140, 151, 152, 155, 156, 157, 170, 241 և այլն):

Նման փաստաթղթերը բազմաթիվ են:

Բազմաթիվ են նաև Կաթողիկոսի կատարած ամենատարբեր բարեգործությունների մասին հուշերն ու տարբեր ամհատական գրությունները, որոնք, հարկավ, հետազայում գալու են է՛լ առավել լրացնելու և ամրողջացնելու Գևորգ Զ Կաթողիկոսի կերպարը:

Նման մի հետաքրքիր փաստաթուղթ այժմ կուզենայինք ներկայացնել ընթերցողին:

1913 թվականին Գևորգ վարդապետ Չորեքյանը նշանակվում է Նոր Նախիջևանի առաջնորդական փոխանորդ: Իր աշխատանքային բուն գործունեության ընթացքում Գևորգ վարդապետն զբաղվում է նաև մանկավարժական աշխատանքով, բարեգործությամբ, սատար կանգնում խելամիտ և ընչազուրկ ուսանողներին, որոնց ուսման վճար հայթայթելը դժվար ու պատվաբեր գործ էր...

1976 թվականին երջանկափիշատակ վազգեն Ա Կաթողիկոսի անունով ստացվեց մի մամակ Ռոստով քաղաքում բնակվող Զարիկ Կորմանուկյանից: Նամակն առանց խմբագրումների և ամրողջությամբ մեջ բերելով՝ կարող ենք պատկերացում տալ դեպքերի ընթացքի մասին:

«11/1-76 թվ.

Ձերո Սրբություն Ամենայն Հայոց Պատրիարք Վազգեն Ա.

Այս մամակը Ձեզ է գրում մախորդ Ամենայն Հայոց Պատրիարք Գևորգ Զ Չորեքյանցի (որից Դուք, Ձերո Սրբություն, ժառանգել եք Ամենայն Հայոց Պատրիարքի տիտղոսը) զարմուհին: Իմ մոր հարազատ հայրը և Չորեքյանցի հարազատ մայրը հարազատ քույր և եղբայր են: Հետևաբար Գևորգ 6-րդը իմ քեռին է:

Իմ ազգանունը Կորմանուկյան է՝ Զարիկ խաչելապիրովնա, իսկ մորս օրիորդական ազգանունը՝ Կիրպոյան: Ես 67 տարեկան եմ, թոշակառու, 2-րդ կարգի հաշմանդամ: Ապրում եմ քաղաք Ռոստով, 344012, Ցելինոգրադյան փ. 6/11, բն. 5:

Գևորգ 6-րդ Չորեքյանցի և իր մոր՝ իմ տատիկի լուսանկարները ես արձանագրությամբ նվիրել եմ ձեր հայկական Սուրբ Խաչ թանգարանին (թերևս նկատի ունի Սուրբ Խաչ եկեղեցուն կից թանգարանը - Հ. Թ.): Իսկ փաստաթուղթը իմ քեռու անցյալ (մի) բարի գործի մասին ուղարկում եմ Ձեզ, թերևս ձեզ մոտ՝ էշմիածնում կա թանգարան, որտեղ այն կպահվի իբրև իմ քեռու՝ մախիկն Պատրիարք Գևորգ Զ Չորեքյանցի բարի գործի խորհրդանիշ:

Իմ քեռին Դոնի Ռոստովում վարդապետ եղած ժամանակ օգնել է քրոջս՝ Օնշանիկին, Գոգոկյան գիմնազիայում սովորելու, քանզի մեր ծնողները հնարավորությունից զրկված էին վճարելու իմ քրոջ՝ գիմնազիայում սովորելու վարձը: Իմ քեռին՝ Գևորգ Զ, դիմել է Ռոստովի ամենահարուստ մարդուն՝ Ս. Դ. Սրաբիոնովին, որը և՛ վճարել է քրոջս ուսման վարձը, մինչև որ նա ավարտել է Գոգոկյան գիմնազիան:

Ուղարկում եմ Ձեզ, Ձերո Սրբություն, մի փաստաթուղթ, որն ինձ համար պատմական նշանակություն ունի:

Հանդեպ Ձեզ ունեցած խորին հարգանք՝

Կորմանուկյան Զ. Խ. »:

«Սիրիր Մերձավորիդ...»:

Այս ամսակը կարդալիս առաջին միտքը, որ ունենում ես՝ սա է:

Ս. Ավետարանի խոսքը, որն իրապես կիրառել է երիտասարդ Գևորգ վարդապետը: Չէ՞ որ մի փոքր բարի գործը, մեկ անգամ արված բարությունը, անձնական բարի օրինակը տասնյակ քարոզ ու բարոյախրատական ճառեր արժեն:

Գևորգ Չորեքչյանի հավատամքը դրսևորվել է և՛ այս մասնավոր դեպքում, և՛ ետայսու՝ իր ողջ հոգևոր ծառայության ընթացքում:

Պատրաստի հագուստեղեն արտադրող և վաճառական, հայազգի Սրաբիոնով-Աները իրավամբ համարվել են դարասկզբի հայաշատ Ռոստովի մեծահարուստներից: Նամակին կցված փաստաթուղթը Սրաբիոնովի մանածագործարանի պաշտոնաթերթիկի վրա գրված մի ամսակ է, որով վստահեցվում է Գևորգ վարդապետ Չորեքչյանին Օուշանիկ Կորմանուկյանի ուսման վարձը վճարելու պարտավորությունն ստանձնելու մասին: Այն թվագրված է 1915 թվականի հոկտեմբեր 8:

«Նորին Սրբազնություն Չորեքչյանց վարդապետին.

Համաձայն Ձեր՝ առ իմ նույնված գրավոր առաջարկին, սույնին կից հղում եմ հիսուն (50) ռուբլի, իբրև ուսման վարձ այդի Գեղեցիկ Կորմանուկյանի դատեր՝ Օուշանիկի՝ Գոգոկյան իգական գիմնազիայում այս տարի սովորելու իրավունքի: Գոգոկյան գիմնազիայում Օուշանիկ Կորմանուկյանի հետագա ուսման տարիներին մինչև ավարտելն ուսման իրավունքի վարձը ժամանակին կնոծեմ ես:

Անկեղծ հարգանքով՝

(ստորագրություն):

...Թե ի՞նչ է եղել երիտասարդ գիմնազիստուհու հետագա ճակատագիրը՝ անհայտ է: Դժվար տարիներ էին: Համաշխարհային առաջին պատերազմ, գաղթ, ապա՝ հեղափոխություն, քաղաքացիական պատերազմ, սով, աքսոր...

Երիտասարդ վարդապետ Գևորգ Չորեքչյանի ճակատագիրը, սակայն, մեզ հայտնի է: Հայտնի է նաև հավատամքը՝ բարություն, հոգածություն, սեր բոլորի նկատմամբ՝ մերձավորի կամ օտարի, մեծի կամ փոքրի:

Այդ հավատամքն առաջնորդեց նրան մինչև Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահը, մինչև Ս. Գրիգոր Լուսավորչի ժառանգորդի կարգավիճակը:

Եվ այդ հավատամքը եղավ նրա հետ մինչև մահ...

Հավանական է, որ այլևս ողջ չէ նաև ամսակի հեղինակը, սակայն իր բաղձանքն իրականացել է: Այս փաստաթուղթը տեղ է գտել Հիմ վեհարան-թանգարանում՝ Գևորգ Չորեքչյան Կաթողիկոսի մախկին բնակարանում, մի վայր, որտեղ այնքա՛ն կարևոր գործեր են կատարվել ու փաստաթղթեր գրվել տասնյակ կաթողիկոսների ձեռքով ու թելադրանքով:

Եվ դրանց կողքին է նաև սա՝ մի բարի գործի փոքրիկ հիշատակը...

ՆՈՎՆԱՆՆԵՍ ԹԱԶՈՒԿՅԱՆ

